ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 19 » դեկտեմբերի 2023 թվականի N: 575-Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից դիմումների ուսումնասիրությունների վերաբերյալ եզրակացությունները և ֆինանսական օգնություն տրամադրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի 2023 թվականի դեկտեմբերի 18-ի N11 արձանագրությամբ ներկայացրած առաջարկությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով քաղաքացիներին հատկացնել 140000 /մեկ հարյուր քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի

2023 թվականի <<19>> դեկտեմբերի-ի N 575-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

N	Անուն, ազգանուն,	Հասցեն	Գումարի չափը /դրամ/
1	Գայանե Գալստյան	Քաղաք Գյումրի, Բուլվարային թաղամաս, տնակ 203/007	20000 /քսան հազար/ դրամ
2	Արթուր Մխիթարյան	Քաղաք Գյումրի, Ղուկասյան փողոց, տուն 169ա	25000 /քսանհինգ հազար/ դրամ
3	Աշխեն Կարապետյան	Գյուղ Ախուրյան, Կոմիտասի փողոց, 3-րդ նրբանցք, տուն 11/2	25000 /քսանհինգ հազար/ դրամ
4	Արա-Գեղեցիկ Հայրիկյան	Քաղաք Գյումրի, Գարեգին Ա-ի փողոց, շենք 6, բնակարան 18	20000 /քսան հազար/ դրամ
5	Անահիտ Ամիրխանյան	Գյուղ Գետք, 2-րդ փողոց, տուն 39	50000 /հիսուն հազար/ դրամ
	Ընդամենը		140000/մեկ հարյուր քառասուն հազար/դրամ